

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔ

ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ



Կազմեց Լուսաղբյուրի համայնքի ղեկավար՝

Մելս Մանուկյանը

Լուսաղբյուր համայնք - 2016թվական

Բովանդակություն

- Ներածություն.....
- ՀԶԾ կառուցվածքը.....
 - 2.1. Համայնքի իրավիճակի նկարագրություն.....
 - 2.1.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն.....
 - 2.1.2. Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակ.....
 - 2.1.3. Համայնքի տարածքում նախատեսվող (շարունակվող) հանրապետական և մարզային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրեր ու միջոցառումներ.....
 - 2.1.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի վերլուծություն, գնահատական և կանխատեսում.....
 - 2.1.5. Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացումը խոչընդոտող գործոնները.....
 - 2.1.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՌԻԹՀՍ) վերլուծություն.....
 - 2.2. Համայնքի նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում.....
 - 2.2.1. Համայնքի հեռահար նպատակի (տեսլականի) սահմանում.....
 - 2.2.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակների սահմանում.....
 - 2.2.3. ՀԶԾ հեռահար նպատակը (տեսլականը) և անմիջական նպատակներն ապահովող ծրագրերի նկարագրություն.....
 - 2.3. ՀԶԾ ֆինանսավորում.....
 - 2.4. ՀԶԾ մոնիթորինգ.....
- 3. ՀԶԾ վերաբերյալ իրազեկում.....
- 4. ՀԶԾ իրականացումը.....
- 5. ՀԶԾ գնահատում.....

2.1. Համայնքի իրավիճակի նկարագրություն

2.1.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

Լուսաղբյուր, գյուղ [Հայաստանի](#) Հանրապետության [Շիրակի մարզում](#), մարզկենտրոնից 22 կմ հարավ-արևմուտք, բարձրությունը ծովի մակարդակից՝ 1470մ: Տեղակայված է Արագած լեռան հյուսիս-արևմտյան լանջին, Շիրակի դաշտի հարավ-արևմտյան մասում: Գյուղը հիմնադրվել է 1826-1829թթ. [Արևմտյան Հայաստանի](#) Մուշի և [Բասենի](#) գավառներից տեղահանված գաղթականների կողմից: Առաջինը գյուղ է եկել Նավասարդ անունով մի մարդ իր ընտանիքով, որը եղել է ներկայիս Համբարյանների նախապապը: Այնուհետև եկել են Յուզբաշոնք՝ ներկայիս Ադանիկյաններն ու Սմբատյաններն են և Բադալենք՝ որ ներկայիս Բադալյաններն են: 1915 թ-ի եղեռնից հետո 1917-1918թթ. [Մուշի Խարս](#) գյուղից արտագաղթածները համալրել էրջանկահիշատակ՝ Անդրանիկ Մարգարյանի պապերը:

Աղյուսակ 1. Ինչ վարչական միավորների է սահմանակցում Լուսաղբյուրը և ինչ ուղղություններով

Հ/հ	Համայնքի անվանումը	Որ կողմից է սահմանակցում
•	Շիրակավան	Հյուսիս
•	Իսահակյան	Հարավ
•	Գուսանագյուղ	Արևելք
•	Մարալիկ	Արևելք
•	Թուրքիա	Արևմուտք

Թուրքական տիրապետության տակ գտնվելու տարիներին գյուղին տրվել է Սվանվերդի անվանումը, որը բառացի թարգմանությամբ նշանակում է ջուր բերող և հավանաբար կապված է եղել գյուղի տարածքում առկա աղբյուրի հետ, որը պահպանված է առ այսօր և համայնքի խմելու ջրի միակ աղբյուրն է հանդիսանում: Սվանվերդի անվանումը համայնքը պահպանել է մինչև 1947թ.:

1887 թվականին Սվանվերդին (Լուսաղբյուր) ընդգրկված է եղել Ալեքսանդրապոլի գավառի կազմում: 1921 թվականին ընդգրկվել է Խորհրդային Հայաստանի կազմում և 1937

թվականից մինչև Հայաստանի Հանրապետության՝ 1996 թվականի վարչատարածքային բաժանումը եղել է Անիի շրջանի կազմում: Իսկ դրանից հետո, որպես վարչական ինքնուրույն միավոր, համայնքի կարգավիճակով ընդգրկված է ՀՀ Շիրակի մարզի կազմում:

Ըստ հայտնաբերված հնագիտական հուշարձանների տեղագրության՝ տեղանքը բնակեցված է եղել դեռևս վաղ բրոնզե դարում:

1920-ական թվականներին գյուղն ունեցել է ավելի քան 300 տնտեսություն: Գյուղը ունեցել է եկեղեցի, որը կառուցվել է 1860 թվականին: 1925-26թթ. գյուղում գործել են տնային դպրոցներ: Այնուհետև գործել է տարրական դպրոց՝ մինչև 4-րդ դասարան: 1939-1940թթ. կառուցվել է Լուսաղբյուրի յոթնամյա դպրոցը: Գյուղի բնակչությունը այդ տարիներին հիմնականում զբաղվել է հողագործությամբ, անասնապահությամբ, մեղվաբուծությամբ և այգեգործությամբ: Գյուղում մշակել են մոտ 9 հա բանջարանոց, գործել է 2 ջրաղաց՝ Անդիկի և Համբոյենց ջրաղացները: Մոտ 165 տարի առաջ գյուղում կառուցվել է 2 ձիթհանք: Շինարարության համար փայտը [Սարիղամիշից](#) բերել են սայլերով: Համբոյենց ձիթհանքը գործել է մինչև 1973 թվականը: Կոլտնտեսության տարիներին զբաղվել են նաև խոզաբուծությամբ, թռչնաբուծությամբ: Այդ տարիներին գյուղում գործել է ակումբ, գրադարան, մանկապարտեզ: Մինչև 1960-ական թվականները գործել է նաև հիվանդանոց-ծննդատուն: Համայնքի տարածքով է անցնում [Երևան-Թբիլիսի](#) երկաթգիծը և Գյումրի-[Արմավիր](#) ավտոճանապարհը: Հեռավորությունը մարզկենտրոնից 20 կմ է: Հիմա գյուղն ունի միջնակարգ դպրոց՝ 182 աշակերտական տեղով, որը կառուցվել է 1990 թ-ին և կատարվել է հիմնական վերանորոգում 2005 թ-ին: Կա մանկապարտեզ 50 երեխայի համար, որը ներկայումս չի գործում, ունի վերանորոգման կարիք: Գյուղն ունի գրադարան 7463 կտոր գրքով, որը ևս ունի վերանորոգման կարիք: Համայնքը գազաֆիկացվել է 2007 թվականին պետբյուջեի միջոցներով, իսկ 7կմ ներհամայնքային ճանապարհներից 3,5կմ-ը 2007 թվականին ասֆալտապատվել է «Գյուղական տարածքների տնտեսական զարգացում» ծրագրի (ԻՖԱԴԻ) և պետբյուջեից կատարված ֆինանսական ներդրումների շնորհիվ: Խմելու ջրի ներքին ցանցը չի գործում, որը համարվում է գյուղի հիմնական խնդիրը: Չի օգտագործվում նաև 300խ/մ տարողությամբ օրվա կարգավորիչ ջրամբարը:

Համայնքը գտնվում է նախկին շրջկենտրոնից 23կմ, մարզկենտրոնից՝ 18կմ և մայրաքաղաք Երևանից 120կմ հեռավորության վրա: Համայնքնով է անցնում Գյումրի-Արմավիր-Երևան հանրապետական նշանակության ճանապարհը:

2.1.2. Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակ

Մինչև հայրենական մեծ պատերազմը Լուսաղբյուրն ունեցել է 300 տնտեսություն՝ շուրջ 1500 բնակչությամբ: Հայրենական մեծ պատերազմից հետո գյուղի բնակչության թիվը կտրուկ նվազել է: Հետպատերազմյան ժամանակաընթացքում գյուղը առավելագույն բնակչություն՝ շուրջ 1000 մարդ ունեցել է 1975-1980-ական թվականներին: Վերջին 20 տարիներին բնակչության թիվը նվազել է կրկնակի չափով և արձանագրվել է բնակչության կազմի ծերացում: Ներկայումս համայնքի աշխատունակ բնակչության 15-20%-ը մեկնում է սեզոնային արտագնա աշխատանքի և շարունակվում է հատկապես երիտասարդ ընտանիքների արտագաղթը համայնքից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ ԵՎ ՌԵԼԻԵՖԸ

Լուսաղբյուրը տեղաբաշխված է Արագած լեռան հյուսիս-արևմտյան լանջին, Շիրակի դաշտի հարավ-արևմտյան մասում: Բնակավայրի հարևանությամբ է գտնվում Ախուրյանի ջրամբարը: Հյուսիսից սահմանակից է Շիրակավան, հարավից՝ Իսահակյան, արևելքից՝ Գուսանագյուղ և Մարալիկ համայնքների վարչական տարածքների, իսկ արևմուտքից՝ Թուրքիայի:

Թուրքիայի սահմանի ուղեփակոցից գտնվում է 500 մ հեռավորության վրա: Ծովի մակերևույթից բարձր է 1520 մ: Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշմամբ բնակավայրը ընդգրկված է Հանրապետության լեռնային բնակավայրերի ցանկում և հանդիսանում սահմանամերձ բնակավայր: Տարածքում գերակշռում է լեռնատափաստանային սևահողերը: Բնակավայրը սակավաջուր է և զուրկ ծառատունկ տարածքներից: Հարուստ է տուֆ քարով, բազալտով շինարարական ավազով ու կավով: Բնակավայրի տարածքը հարուստ է արդեզյան և ծծմբով հարստացված ջրերով: Հողատարածքները մշտապես վտանգված են կարկտահարությամբ և տևական երաշտով: Տարածքը գտնվում է ուժեղ սեյսմիկ գոտում: Հիշարժան են 1926թ. և 1988թ. աղետալի երկրաշարժերը: Համայնքի վարչական տարածքը կազմում է 2168.2 հա, որից գյուղատնտեսական նշանակության հողեր են 2020.5 հա-ը, այդ թվում 689.9 հա գյուղատնտեսական այլ հողատեսքեր: Համայնքի կառուցապատման տարածքը զբաղեցնում է 106.3 հա: Բնակավայրը գտնվում է նախկին շրջկենտրոնից 23 կմ, մազկենտրոնից 18 կմ և մայրաքաղաքից՝ 120 կմ

հեռավորության վրա:Բնակավայրով է անցնում Գյումրի - Արմավիր - Երևան հանրապետական նշանակության ճնապարհը:Բնակավայրը երկաթուղային կայարանից գտնվում է 100 մ հեռավորության վրա :

ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ըստ տոհմագրական տվյալների՝ Լուսաղբյուրը հիմնադրվել է 1828-1830-ական թվականներին Արևմտյան Հայաստանի Ղարսի և Մուշի գավառներից գաղթաց ընտանիքների կողմից : Հետագայում գյուղը համալրվել է 1915 թվականի եղեռնից փրկված գաղթաց ընտանիքների կողմից: Բնակավայրը հիմնականում զարգացում է ապրել Հայաստանում Խորհրդային կարգերի հաստատումից հետո:Մինչև Հայրենական Մեծ պատերազմը գյուղն ունեցել է 300 տնտեսություն՝ շուրջ 1500 բնակչությամբ :Հայրենական Մեծ պատերազմից հետո գյուղի բնակչության թիվը կտրուկ նվազել է :Հետպատերազմյան ժամանակաընթացքում համայնքը առավելագույն բնակչություն՝ շուրջ 1000 մարդ է ունեցել 1975-1980 -ական թվականներին:Վերջին 20 տարիներին համայնքի բնակչության թիվը նվազել է կրկնակի չափով և արձանագրվել է բնակչության կազմի ծերացում : Ներկայումս համայնքի աշխատունակ բնակչության 15-20%-ը մեկնում են սեզոնային արտագնա աշխատանքի և շարունակվում է հատկապես երիտասարդ ընտանիքների արտագաղթը համայնքից :

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ՝ ԸՍՏ 2016Թ. ՀԱՇՎԱՌՄԱՆ/ՄԱՐԴ/.

.Մշտական բնակչություն-734

Այդ թվում՝

.Տղամարդ-382

.Կին-352

.Առկա բնակչություն-718

.Ընտանիքների թիվը-179

.Նախադպրոցական տարիքի երեխաներ /0-5տարեկան/-77

.Դպրոցական տարիքի երեխաներ/7-18տարեկան/-110

.Հասուն տարիքի բնակչություն /18-65տարեկան/-230

.Տարեց բնակչություն /65 և ավելի/-63

.Ընտրողների թիվը-464

.Կենսաթոշակատուների թիվը -74

.Հայրենական պատերազմի մասնակիցներ-0

.Հաշմանդամներ-33

Այդ թվում՝

.Մանկուց հաշմանդամներ-4

.Ազատամարտիկներ-2

.Բռնագաղթվածներ-0

.Նպաստառու ընտանիքներ-31

Աշխատունակ բնակչություն-390

.Զբաղվածների թիվը-350

.Այլ ազգիներ-36

.Գործազուրկների թիվը-100

.Բազմազավակ ընտանիքներ-10

.Անօթևան ընտանիքներ-15

ՀՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ԱԶԳԱՅԻՆ
ՊԱՏԿԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ/ ՏՈԿՈՍ՝ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԻ ՆԿԱՏՄԱՍԲ /

. Հայ-----	95.1
. Եզդի-----	4.9
. Ռուս-----	0.0
. Քուրդ-----	0.0
. Թուրք-----	0.0
. Հույն-----	0.0
. Այլ-----	0.0

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ
ՃՅՈՒՂԵՐԻ /ՄԱՐԴ/

Ընդամենը զբաղվածներ-350

Այդ թվում՝

- .Գյուղատնտեսական ինքնազբաղվածություն /թերի բեռնվածությամբ /-300
- .Վարձու աշխատանք գ/տ ոլորտում-10
- .Վարձու աշխատանք ոչ գ/տ ոլորտում,պետական-28
- .Վարձու աշխատանք ոչ գ/տ ոլորտում,մասնավոր-10
- .Ոչ գ/տ ինքնազբաղվածություն-1
- .Ուսանողներ-14
- .Բանակում ծառայողներ-5

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Ժողովրդի իշխանությունն իրականացնելու և համայնքային խնդիրները լուծելու նպատակով համայնքում օրենքով սահմանված կարգով ընտրված են համայնքի ավագանի՝ ավագանու 5 (հինգ) անդամներով և համայնքի ղեկավար 2016թ. հոկտեմբերի 2-ին համայնքում կայացած համայնքի ղեկավարի ընտրությունների արդյունքներով առաջադրված երկու թեկնածուներից համայնքի ղեկավար է ընտրվել Լուսաղբյուր համայնքի բնակիչ՝ Մելս Գուրգենի Մանուկյանը ,ծնված 1972 թ. ,ունի բարձրագույն կրթություն,անկուսակցական է :

<< Տեղական ինքնակառավարման մասին >> և << Համայնքային ծառայության մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքների համաձայն ձևավորվել է համայնքի ղեկավարի աշխատակազմ հետևյալ կառուցվածքով :

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ՝

- . Համայնքի համայնքապետարանի աշխատակազմի Ժամանակավոր քարտուղար -1
- . Համայնքի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ-1
- . Համայնքի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-1

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱԶՄԸ

N	Անուն , ազգանուն	Ծննդ. թիվը	Կրթություն	Կուս.պատկ.
1	Արա Բաղայան	1967թ.	միջնակարգ	անկուս.
2	Պարզև Բաղայան	1983թ.	միջնակարգ	ՀՅԴ
3	Համլետ Հարությունյան	1983թ.	միջնակարգ	ՀՀԿ
4	Հրաչ Մելքոնյան	1983թ.	միջնակարգ	անկուս.
5	Արմեն Ասլանյան	1977թ.	միջնակարգ	անկուս.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ

Անուն , ազգանուն	Պաշտոնը	Կրթությունը	Ծննդ.թիվը
Վարդան Հարությունյան	աշխատակազմի քարտուղար ժ/պ	թերի բարձրագույն	1969թ.
Աշոտ Միքայելյան	առաջատար մասնագետ-հաշվապահ	բարձրագույն	1993թ.
Մացակ Ալեքսանյան	առաջատար մասնագետ	բարձրագույն	1957թ.

<< Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու կանոնակարգի համաձայն համայնքում կազմավորվել են մշտական գործող հանձնաժողովներ.

- . Վարչական հարցերի հանձնաժողով
- . Անչափահասների հարցերի հանձնաժողով
- . Խնամակալության և հոգաբարձուների հարցերի հանձնաժողով
- . Սոցիալական ապահովության հարցերի հանձնաժողով

Համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների կառուցվածքը և ներքին հարաբերությունները գրաֆիկական տեսքով ներկայացված տեսքով ներկայացված է թիվ 1

Համայնքի սեփականության գույքի ցանքը սահմանված է Հայաստանի Հանրապետության կառավարության 14.03.1997թ. << Հայաստանի Հանրապետության համայնքների սեփականության գույքի ցանկը սահմանելու մասին >> թիվ 51 որոշմամբ: Հետագայում Շիրակի մարզպետարանի կողմից սեփականության իրավունքով համայնքին է հանձնվել բնակելի տան անավարտ 6 շինարարական օբեկտ :

Համայնքի գույքի ֆիզիկական և բարոյական մեծ մաշվածություն ունի: Քայքայված և անմխիթար վիճակում են համայնքային սեփականության հանդիսացող գյուղական ակումբի , գրադարանի, գյուղապետարանի և մանկապարտեզի շենքերը :

Կենտրոնացված ջրամատակարարման բացակայության պատճառով խմելու ջրի 7 կմ ընդհանուր երկարության ներհամայնքային ցանցից օգտագործվում է ընդամենը 2.5 կմ-ը , չի օգտագործվում նաև տարողության օրվա կարգավորման ջրամբարը:

7կմ. ընդհանուր երկարության ներհամայնքային ճանապարհներից 2007 թվականին << Գյուղական տարածքների տնտեսական զարգացման >> ծրագրի (ԻՏԱԴԻ) և պետբյուջեի կողմից կատարված ֆինանսական ներդրումների շնորհիվ ասֆալտապատվել է 3.5 կմ ներհամայնքային ճանապարհները գտնվում են անբարեկարգ վիճակում :

Բնակավայրը գազաֆիկացվել է 2007թվականին պետբյուջեի միջոցներով :

Համայնքի սեփականության գույքը Համաշխարհային Բանկի <<Գյուղատնտեսական բարեփոխումների աջակցության >>ծրագրի օժանդակությամբ 2008թ-ին համալրվել է 54000 ԱՄՆ դոլար արժողության գյուղատնտեսական տեխնիկայով : Գտնվել է բելառուս ՄՏՁ 82 մակնիշի մեկ տրակտոր, մեկ գութան, մեկ կուլտիվատոր և մեկ շարքացան :

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ ՑԱՆՔ

N	Գույքի անվանումը	Չափի	Քանակը	Հաշվեկշիռ	Տեխնիկական վիճակի բնութագիրը
---	------------------	------	--------	-----------	------------------------------

		միավոր		արժեքը /հ.դրամ/	
1	2	3	4	5	6
1	Գյուղական ակումբ	հատ	1	717035.9	Ենթակա է հիմնանորոգման
2	Մանակապարտեզ	հատ	1	4364017.2	Չի շահագործվում, ենթակա հիմնանորոգման
3					
4	Օրվա կարգավորման ջրամբար 300լսմ.	հատ	2	-	Չի շահագործվում, ենթակա է նորոգման
5	Գրադարան /7462 կտորգրականության/	հատ	1	2182008.6	Ենթակա է հիմնանորոգման
6	Գերեզմնատուն /ցանկապատ/	հատ	1	1411115.0	Ունի բաց գարգ ցանկապատված է
7	Ներհամայնքային ճանապարհներ	կմ	7.0	-	3.5կմ հատված. Ասֆալտապատ է իսկ 3.5կմ ենթակա է հիմնանորոգման
8	Պահեստ	հատ	1	203313.1	Ենթակա է նորոգման
9	Գյուղապետարանի շենք	հատ	1	1454612.4	Շահագործվում է ենթակա վերանորոգման
10	Բնակելի տան անավարտ շինարար	հատ	7	3009808.0	Ունեն նախնական ամրացումներ
11	Վագոն տնակ	հատ	10	1226862.0	Շահագործվում են
12	Ֆիննական հավաքովի փայտե	հատ	7	676845.6	Շահագործվում են
13	Ավտոմեքենայի կշեռք	հատ	1	717035.9	Ենթակա է նորոգման
14	Տրակտոր բելառուս ՄՏՁ 382	հատ	1	6300000.0	Ենթակա է նորոգման
15	Գուրթան	հատ	1	1900000.0	Ենթակա է նորոգման
16	Շարքացան	հատ	1	4000000.0	Ենթակա է նորոգման
17	Գրասենյակային գույք	հատ	18	-	Բարվոք է
18	Արտաքին լուս. ցանց				Շահագործվում է
19	Կուլտիվատոր	հատ	1		Ենթակա է նորոգման

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Բնակավայրը չունի կեղտաջրերի և անձրևաջրերի հեռացման համակարգեր: Հեղադատարի բացակայության պատճառով բնակավայրի առանձին թաղամասեր գարնան ձնհալի ժամանակահատվածում վտանգված են հեղեղումների : Համայնքը կոյուղացված չէ և կեղտաջրերի հեռացումը կատարվում է անհատական խորքային հորերի միջոցով: Բնակավայրում աղբահանությունը կատարվում է համայնքի բնակիչների կողմից անհատական նախաձեռնությամբ և սանիտարական օրեր կազմակերպելու միջոցով: Բնակավայրը նպատակային նշանակության աղբատեղի չունի: Սակավ է համայնքի կանաչատար և ծառատունկ տարածքները: Բնակավայրը չունի կառուցապատ հանգստի գոտի, հատկապես ամռան ժամանակաշրջանում բարձր օդի աղտոտվածությունը:

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքում կա համայնքի բնակչության սեփականությունը հանդիսացող 187 անհատական առանձնատուն՝ 38000քմ ընդհանուր մակերեսով: Բնակավայրը գտնվելով 1988թ. << Սպիտակի >> աղետալի երկրաշարժի գոտում, համայնքի բնակֆոնդի մոտ 30% -ը ունեն 2-4 աստիճանի վնասվածություն: Համայնքի բնակարանային տնտեսությունը տուժել է նաև 1978թ. երկրաշարժից: Երկրաշարժի հետևանքով անօթևանի կարգավիճակ ունեն 16 ընտանիք, որոնք շուրջ 20տարի է ինչ բնակվում են վագոն տնակներում: Իսկ բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեն երիտասարդ 17 ընտանիքներ: Համայնքում կա 7 բնակելի տների անավարտ շինարարական օբյեկտ, որոնց շինարարությունը սկսվել է երկրաշարժից հետո և միջոցների բացակայության պատճառով մինչև օրս չի շարունակվել:

Բնակարանային տնտեսության բնութագրիչներ	Շենքերի քանակը /հատ/	Բնակարանների /բն.տների/քանա. հատ/	Ընդհանուր բնականակերեսը /քառ.մ. /
Համայնքային սեփականության բազմաբնակարան բնակելի շենքեր	-	-	-
1սենյականոց բնակարաններ	-	-	-
2սենյականոց բնակարաններ	-	-	-
3սենյականոց բնակարաններ	-	-	-
4 և ավելի սենյականոց բնակարաններ	-	-	-
Կառուցման ժամկետները	-	-	-
Մինչև 10 տարի առաջ կառուցված	-	-	-
11-20 տարի առաջ կառուցված	-	-	-
21-50 տարի առաջ կառուցված	-	-	-
50-և ավելի տարի առաջ կառուցված	-	-	-
Անհատական առանձնատներ			13200
Ընդհանուր միջին մակերեսը	x	x	104.8
ԸՆԴԱՄԵՆԸ ԲՆԱԿՏՈՆԴ			13200

ԽՄԵԼՈՒ ԵՎ ՈՌՈԳՄԱՆ ՋՈՒՐ

Համայնքի բնակչության խմելու ջուրը մատակարարվում է լոկալ համակարգով՝ բնակավայրում առկա 8.1 լիտր /վրկ հզորության բնական աղբյուրի միջոցով: Մինչև 1990թ. բնակավայրին խմելու ջուր է մատակարարվել նաև «Արևիկ-Մարալիկ» ներկայումս «Կրասար -

Մարալիկ>>ջրամատակարարման կենտրոնացված համակարգից, սակայն ջրի քանակության նվազման պատճառով շուրջ 24 տարի է ինչ ջրամատակարարումը դադարեցվել է :Համայնքի ներտնտեսային ցանցի բացակայության պատճառով խմելու ջուրը տեղափոխվում է աղբյուրից ձեռքով և սայլակների միջոցով, որի պարբերաբար ուսումնասիրվում է հազահամաճարակային ծառայության կողմից :Համայնքը հարուստ է ջրային պաշարներով անհրաժեշտ ուսումնասիրության և գնահատումից հետո կարելի է տեղի պաշարը օգտագործել խմելու ջրի համար:2017-2018թվականներին համայնքը կարող է ապահովել ծրագրի ծախսերի 10 %ը:Համայնքը չունի նաև ոռոգման ցանց:Ոռոգման ցանցի առկայության դեպքում կտրուկ կբարձրանա բերքատվությունը ,որն էլ կազդի բնակչության կենսամակարդակի բարձրացմանը:Ցավոք համայնքի բյուջեի սղության և ծրագրի բարձր ինքնարժեքի պատճառով համայնքի միջոցներով նման ծրագիր իրականացնելն անհնար է :

ՏՐԱՆՍՊՈՐՏ ԵՎ ԿԱՊ

Բնակավայրի հարևանությամբ անցնող Գյումրի-Արմավիր հանրապետական նշանակության ասֆալտապատ ճանապարհը համայնքի համար հանդիսանում է և միջհամայնքային, մազկենտրոնի և մայրաքաղաքի հետ կապող ճանապարհ :

Ներհամայնքային 7կմ ընդհանուր երկարության ճանապարհներից 2008 թվականին <<Գյուղական տարաշքների տնտեսական զարգացման>> ծրագրի (ԻՖԱԴԻ) և պետբյուջեյի կողմից կատարված ֆինանսական ներդրումների շնորհիվ ասֆալտապատվել է 3.5 կմ ճանապարհատված:Մնացած 3.5 կմ ներհամայնքային ճանապարհները գտնվում են քայքայված և անբարեկարգ վիճակում :Անբարեկարգ և քայքայված վիճակում են համայնքի դաշտամիջյան ճանապարհների առանձին տեղամասեր,որի հետևանքով լուսջ հետևանքով լուրջ դժվարություններ են սեղծվում գյուղատնտեսական աշխատանքների ընթանցքում :

<<ՎԻՎԱՍԵԼ ՄՏՄ>> և << ԲԻԼԱՅՆ >>բջջային ալեհավաքային հեռախոսային կապից:Բնակավայրը-մարզկենտրոն տրանսպորտային կապը ապահովում է 5 երթուղու միջոցով :Նախկին շրժկենտրոնի և համայնքի տրանսպորտային երթուղին չի գործում:Անձնական տրանսպորտային սեփականության միջոցով ապահովված են համայնքի 40ընտանիքներ:

ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Համայնքի վարչական տարաշքը կազմում է 2168.2 հա .է որից`

1.Գյուղ. նշանակության հողեր-2020.5հա.

Այդ թվում`

վարելահող-689.2հա.

արոտ-1295.4հա.

գյուղատնտեսական նշ.

այլ հողեր-35.9հա

2.Բնակավայրի հողեր-106.3հա.

3.Հանաքավայրերի,արդյունաբերական,արտադրական շինությունների տակ հողեր-11.0հա

4.Ճահապարհների տակ հողեր-8.1 հա.

5.Առողջապահական,հանգստավայրի,մարզական ու պատմամշակութային նշանակության հողեր-12.0 հա

6Անտառային և ջրային ֆոնդի հողեր-9.8 հա

7.Հատուկ նշանակության հողեր-0.2

Համայնքի հողատարաշքերը համայնքի տնտեսությունների կողմից օգտագործվում են ամբողջությամբ:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Համայնքը արդյունաբերական ձեռնարկություններ չունի :Չնայած նրան,որ համայնքի տարածքը հարուստ է տուֆով ,բազալտով,շինարարական ավազով և կավով,սակայն ընդերքի պաշարների լիարժեք ուսումնասիրություններ չեն կատարվել և հանքաշահագործման ծրագրեր չեն մշակվել:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Գյուղատնտեսության բնակավառի հիմնական ճյուղերը հացահատիկային կուլտուրաների մշակումն ու անասնապահությունն են :Ոռոգելի հողատարածքների բացակայության պատճառով համայնքը լուրջ դժվարությունների առաջ է կանգնած գյուղ.մթերքների կայուն արտադրություն կազմակերպելու համար:Կուլտնտեսության լուծարումից հետո, համայնքում կազմավորվել են 161 գյուղացիական տնտեսություններ,որոնց կողմից մշակվում է 689.2 հա վարելահող,որից 537.4հա հանդիսանում է համայնքի գյուղացիական տնտեսությունների սեփականությունը:Մեկ տնտեսության սեփականություն հանդիսացող միջին գյուղատնտեսական նշանակության հողատարածքը կազմում է 2.18հա.:Համայնքի 71 տնտեսությունների կողմից վարձակալական հիմունքներով օգտագործվում է 151.8հա. համայնքային սեփականության վարելահող:Դաշտավարության բնագավառում տնտեսությունները հիմնականում զբաղվում են ցորենի,գարու,կերային մշակաբույսերի,մասամբ կատոֆիլի,կաղամբի և բանջարաբուստանայինայլ կուլտուրաների մշակությամբ :Արտադրության արտոյունավետությունը կախված է բնակլիմայական բարենպաստ պայմաններից:Ցանքատարածությունները մշտապես վտանգված են երաշտով կարկտահարությամբ:Հացահատիկային կուլտուրաների միջին բերքատվությունը բնակլիմայական բարենպաստ պայմանների դեպքում կազմում է 25-30 ցենտ.:Երաշտի կարկտահարության դեպքում կորուստը կազմում է 50-100% :Գյուղացիական տնտեսությունների կողմից պահվում է 450 գլուխ խոշոր եղջերավոր անասուններ` այդ թվում կովեր` 220 գլուխ,մանր եղջերավոր անասուններ` 900,խոզեր` 200 գլուխ :Առանձին տնտեսություններ զբաղվում են մեղվապահությամբ :Համայնքի բնակչության կողմից սպառվում է արտադրված գյուղատնտեսական արտադրաքանակի 75%-ը:Գյուղում կա 11 տրակտոր,1 կոմբայն,2 խոտհնձիչ, 20 բեռնատար ավտոմեքենա և տասնյակ գյուղ մեխանիզմներ ու գործիքներ :Համայնքի սեփականության գույքը Համաշխարհային Բանկի ,<<Գյուղատնտեսական բարեփոխումների աջակցության >> :Ծրագրի օժանդակությամբ 2008թ-ին համալրվել է 54000 ԱՄՆ դոլար արժողության գյուղատնտեսական տեխնիկայով :Գնվել է Բելառուս ՄՏՁ 2 մակնիշի մեկ տրակտոր,մեկ գութան ,մեկ շարքացան և մեկ կուլտիվատոր :

ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

1. Գյուղատնտեսական հողատեսքերը

Հողատեսքի անվանումը	2016թ.	
	հա	որից օգտագործվում է,հա
Ընդամենը գյուղատնտեսական նշանակության հողեր,որից՝		
Վարելահող	2020.5	2020.5
Բազմամյա տնկարկներ	689.2	689.2
Խոտհարկներ	-	-
Արոտավայրեր	1295.4	1295.4
Այլ գյուղատնտեսական հողեր	35.9	35.9

2. Հիմնական մշակաբույսերի ցանքատարածությունների կառուցվածքը

Ցանկատարածությունների կառուցվածքը	2016թ.	
	հա	%
Ցորեն	290	45
Գարի	241	38
Բանջարեղեն	-	-
Կարտոֆիլ	-	-
Կերային մշակաբույսեր	78	12
ԸՆԴԱՄԵՆԸ	638	95

3. Հիմնական մշակաբույսերի համախառն բերքը և բերքատվությունը

Մշակաբույսերի տեսակները	2016թ.
Հացահատիկային մշակաբույսեր	
Համախառն բերքը, տոննա	1200
1 հա-ի բերքատվությունը, տոննա	2
Կարտոֆիլ	
Համախառն բերքը, տոննա	-
1 հա-ի բերքատվությունը, տ/հա	-
Բանջարեղեն	
Համախառն բերքը, տոննա	
1 հա-ի բերքատվությունը, տոննա	
Կերային մշակաբույսեր	
Համախառն բերքը, տոննա	170.0
1 հա-ի բերքատվությունը	2.2

4.Անասնագլխաքանակը

/գլուխ/

Գյուղ.կենդանիների տեսակները	01.01.2016թ.
Խոշոր եղջերավոր անասուններ	450
որից՝ կովեր	220
Խոզեր	200
Ոչխարներ և այծեր	900
Թռչուններ	1400
Մեղվաընտանիքներ	170

**5.Անասնապահական մթերքների արտադրության ծավալները և անասունների
մթերատվությունը**

Անասնապահական մթերքների տեսակը	2016թ.
Մսի իրացում տոննա	34.0
Կաթի արտադրություն,տոննա	530
Բրդի արտադրություն,տոննա	1.5
Ձվի արտադրություն,հազ.հատ	230
1կովի կաթնատվությունը,կգ	1650
1ոչխարի բրդատվությունը,կգ	2.1
1հավի ձվատվությունը	150

6. Համայնքում առկա գյուղատնտեսական մեքենաներ ու գործիքներ

Գյուղ մեքենայի,գործիքների անվանումը	Չափի միավորը	Քանակը
Թրթուրավոր տրակտոր	հատ	2
Անիվավոր տրակտոր	հատ	12
Հացահատիկային կոմբային	հատ	1
Խոտհնձիչ կոմբային	հատ	2
Բեռնատար ավտոմեքենա	հատ	20
Տրակտորային կցասայլ	հատ	4
Գուրթան	հատ	6
Կուլտիվատոր	հատ	5
Շարքացան	հատ	4
Հակավարդ	հատ	4
Հատիկագտիչ մեքենա	հատ	1

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ,ՄՇԱԿՈՒՅԹ,ՍՊՈՐՏ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Համայնքն ունի մեկ հանրակրթական դպրոց,որտեղ սովորում են 85 աշակերտ :Դպրոցում աշխատում են 19 մանկավարժներ,որից 18-ը ունեն բարձրագույն կրթություն :Դպրոցի շենքը 2005թ. նորոգվել է Հ .Հ. սոցիալական ներդրումների հիմնադրամի միջոցներով՝ 730.մլն. նախահաշվային արժեքով: Դպրոցն ունի տեխնիկական վեազինման և կոսմետիկ վերանորոգման կարիք: Համայնքի միակ մշակույթային օջախը գյուղական ակումբն է ,որը կառուցվել է 1950-ական թվականներին և մինչև հիմա նորոգման չի ենթարկվել :Շենքի քայքայվածության և անբարեկարգ վիճակի պատճառով այն գրեթե չի օգտագործվում և չի ծառայում համայնքի կարիքների համար:Նորոգման կարիք ունի նաև գրադարանի շենքը ,որն ունի 7462 կտոր գրականություն :Մանկապրտեզի շենքը նույնպես գտնվում է քայքայված անբարեկարգ վիճակում :Միջոցների բացակայության այն չի նորոգվում և չի շահագործվում:Համայնքում համապատասխան հարմարություններ չկան բնակչության հանգստի և ազատ ժամանցի կազմակերպման ,երեխաների մշակույթային և գեղագիտական դաստիարակության համար:Համայնքում համապատասխան հարմարություններ չկան նաև

սպորտի և ֆիզիկական կուլտուրայի զարգացման համար:Միջոցների Բացակայության պատճառով համայնքը չի կարող սեփական նախաձեռնությամբ կազմակերպել համաայնքի մշակույթի տան ,գրադարանի և մանկապարտեզի շենքերի նորոգման և գույքային համալրման աշխատանքները:Համայնքի բանակչության առողջապահական սպասարկումն իրականացվում է <<Աղին առողջության կենտրոն>>ՓԲԸ-ի համայնքի բուժ. Մանկաբարձական կետի միջոցով:Վերջինս Հայաստանում ԱՄՆ դեսպանության ՆՈՎԱ ծրագրի և համայնքի կողմից կատարված ներդրումների շնորհիվ նորոգվել է 2005 թվականին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒՃԵՂ ԿՈՂՄԵՐԸ

- 1Բնակավայրի գազաֆիկացված լինելը
- 2Տուֆ քարի,շինարարական ավազի և կավի առկայությունը
- 3Բերրի վարելահողի առկայությունը
- 4Ախուրյանի ջրամբարի հարևանությամբ գտնվելը
- 5Գյումրի -Արմավիր մայրուղու հարևանությամբ գտնվելը
- 6Երկաթուղային կապի գտնվելը
- 7Արտեզյան ջրերի մեծ պաշարների առկայությունը
- 8Ծծումբով հարստացված հանքային ջրի առկայությունը
- 9Բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կադրերի և բանվորական աշխատուժի առկայությունը
- 10Համայնքի համախմբվածությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- 1 Ոռոգելի վարելահողերի բացակայությունը
- 2 Բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանները
- 3 Հակակարկտային կայանների բացակայությունը
- 4 Համայնքի գյուղացիական տնտեսությունների թույլ զարգացվածությունը
- 5 Գյուղատնտեսական տեխնիկայի մաշվածությունը
- 6 Որակյալ սերմերի և տոհմային ցեղատեսակների բացակայությունը, պարարտանյութերի, թունաքիմիկատների և բուժանյութերի բարձր գները
- 7 .1988թ. երկրաշարժի հետևանքով համայնքի բնակֆոնդի հասցված վնասները.
8. Համայնքի բնակչության սոցիալական անապահով վիճակը ցածր կենսամակարդակը
- 9 Անոթևանի կարգավիճակ ունեցող 15 ընտանիքների առկայությունը
- 10 Բնակ. պայմանների բարելավման կարիք ունեցող 18 երիտասարդ ընտանիքների առկայությունը
- 11 Մշակույթի տան ,մանկապարտեզի և գրադարանի քայքայված ու անբարեկարգ վիճակը

12Խմելու ջրի համակարգի բացակայությունը

13Կոյուղու համակարգի բացակայությունը

14Ներհամայնքային դաշտամիջյան ճանապարհների քայքայվածությունը

15Համայնքի բնակչության աշխատանքային թերբեռնվածությունը և գործազրկության բարձր մակարդակը

16Երիտասարդ ընտանիքների արտահոսքը համայնքից

17Տեղական բյուջեի սահմանափակ միջոցները

ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

. Տուֆ քարի ընդերքի պաշարների ուսումնասիրում,քարի արտադրության կազմակերպում,նոր աշխատատեղերի ստեղծում

. Ախուրյանի ջրամբարի և արտեզյան ստորգետնյա ջրային ռեսուրսների բազայի վրա ռոռզման համակարգի կառուցում

. Երկարաժամկետ և մատչելի տոկոսադրույքներով գյուղատնտեսական նպատակային վարկերի միջոցով գյուղմթերքների արտադրության ավելացում,վերամշակաման փոքր ձեռնարկությունների հիմնադրում

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԸ

. Սեյսմիկ գոտում գտնվելու հանգամանքը

. Խմելու ջրի ներտնտեսային ցանցի բացակայությունը

. Կոյուղաջրերի հեռացման ցանցի բացակայությունը

. Մշակույթի տան և մանկապարտեզի քայքայված անմխիթար վիճակը

. Հողի հարկերի գանձման դժվարությունները

.Բնական

աղետների/երաշտ,կարկտահարության,ցրտահարության,հեղեղավտանգիրավիճակներ/և բնակլիմայական ոչ բարենպաստ պայմաններ

. Երիտասարդ ընտանիքների արտագաղթը

ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Համայնքի ռազմավարությունն է.

Տնտեսական և սոցիալական ոլորտների բարեփոխումների ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները,բարձրացնել բնակչության կեսամակարդակը:

Փոքր և միջին բիզնեսի զարգացման միջոցով ավելացնել նոր աշխատատեղեր և կանխել արտագաղթը համայնքից:

Հիմնական նպատակներ

. Կրասար- Մարալիկ կենտրոնացված ջրամատակարարման վերականգման,խմելու ջրի ներտնտեսային ցանցի և ՕԿՋ-ի նորոգման և ցանցի ընդլայնմքն միջոցով բնակչության խմելու ջրի մատակարարման բարելավում:

. Կոյուղու ցանցի կառուցում

. Համայնքի կենտրոնի կառուցում

. Մանկապարտեզի նորոգում

. Գրադարանի նորոգում

. Ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների նորոգում

. Ոռոգման ցանցի կառուցում

. Գյուղացիական տնտեսությունների զարգացում ֆերմերային տնտեսությունների հիմնում

. Տուֆ քարի ընդերքի պաշարների ուսումնասիրում,քարի արտադրության կազմակերպում,նոր աշխատատեղերի ստեղծում

. Համայնքում գործարար նախաձեռնությունների խթանում,գյուղ մթերքների վերամշական փոքր և միջրն ձեռնարկությունների հիմնում.

- . Հիփոթեքային վարկերի միջոցով անհատական բնակարանային շինարարության խթանում
- . Անօթևանի կարգավիճակ ունեցող 15 ընտանիքներին բնակարանի ապահովում
- . Համայնքի մշակույթային կյանքի աշխուժացում,ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացում
- .Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին աջակցություն

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՖԻՆԱՆՍԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Համայնքի բյուջեի նկարագրություն և վերլուծություն

Համայնքում ծառայություններ մատուցելու և ծրագրեր իրականացնելու համար կարևոր նշանակություն ունի համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումները:Համայնքի բյուջեն հիմնականում ձևավորվում է պետբյուջեից տրվող դոտացիայից և համայնքի սեփական եկամուտներից:Համայնքի սեփական աղբյուրներն են՝ հողի հարկիր,գույքահարկը,վարձակալության տրված համայնքային սեփականության գյուղատնտեսական նշանակության հողերի վարձավճարները,տեղական տուրքերն ու վճարներն,ինչպես նաև համայնքի սեփականության գույքի օտարումից գոյացող միջոցները:Նախորդ 3 տարների համայնքի բյուջեի սեփական եկամուտները կատարվել են 107.1, 64.0, 68.8 , տոկոսներով:Համայնքում լուրջ դժվարություններ կան հողի հարկի հավաքագրման հարցում:

Համայնքի տեղական բյուջեի ֆինանսական կարողությունները հնարավորություն չեն տալիս լուծելու համայնքում առկա և հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրները :Համայնքում առկա հիմնախնդիրների լուծման հարցում անհրաժեշտ է պետական

մարմինների և հանրապետությունում գործող միջազգային կազմակերպությունների աջակցությունը: Սեփական եկամուտների ցածր մակարդակի առկայության պայմաններում հնգամյա ժամկետում համայնքի բյուջեի աճը ուղղակիորեն պայմանավորված կլինի դոտացիոն գումարների տեմպերից : Համայնքը պատրաստակամ է բաժնեմասային/համաֆինանսաորման/կարգով մասնակցություն ունենալ միջազգային և հանրապետական կազմակերպությունների կողմից իրականացվող կապիտալ ներդրումային ծրագրերին, որի համաֆինանսավորման աղբյուր կարող է հանդիսանալ համայնքի բյուջեի սեփական միջոցները, համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքների օտարումից գոյացող միջոցները, ինչպես նաև համայնքի բնակչության կողմից կատարվող ներդրումները:

ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Հ/Հ	Եկամուտի տեսակը	2017թ. նախատեսված	2018թ. կանխատեսում	2019թ. կանխատեսում	2020թ. կանխատեսում	2021թ. կանխատեսում
	Եկամուտները, ընդամենը	16244.4				
Ա	Հարկային եկամուտներ					
1	Հողի հարկ	2199.5				
2	Գույքահարկ	1220.2				
3	Այլ հարկային եկամուտներ					

Բ	Տուրքեր	16.0				
1	Պետական տուրքեր					
2	Տեղական տուրքեր	16.0				
Գ	Ոչ հարկային եկամուտներ					
1	Համայնքային սեփ. հող. վարձ./վճ	837.0				
2	Գույքի վարձավճաներ					
3	Տեղական վճարներ					
4	Այլ ոչ հաշվային եկամուտներ					
5	Տեղ. ինք. մար.պետ.կողմ.լիազ.իր .հ.մ					
Դ	Պաշտոնական տրանսֆերներ	11971.7				
1	Դոտացիա	11971.7				
2	Սուբվենցիա					
Ե	Եկամուտներ ,կապիտալի գործառնություն					
Զ	Տարեսկզբի ազատ մնացորդ					
Է	Ֆոնդային բյուջե	2337.0				
6	Բյուջեի կատարում %					

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Հազար դրամ

N	Ծրագրի անվանումը	Ծրագրի ընդհանուր	Դոնոր կազմակերպության	Համայնքի ներդրում	Ներդրման նախատ. ժամկետը
---	------------------	------------------	-----------------------	-------------------	-------------------------

		արժեքը	ներդրում		
1	Խմելու ջրի ներսնտեսային ցանցի վերանորոգում	50000000	45000000	5000000	2017-2018թթ.
2	Ներհամայնքային ճանապարհների նորոգում	1000000	900000	100000	2018թ.
3	Գյուղապետարանի շենքի վերանորոգում	600000	-	600000	2018թ.
4	Նախակրթարանի շենքի վերանորոգում	10000000	9000000	1000000	2018թ.
5	Համայնքի կենտրոնի կառուցում	50000000	45000000	5000000	2019թ.

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐՁԻՆ 10 ՏԱՐԻՆԵՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԻ

N	Ծրագրի անվանումը	Իրականացնող կազմակերպությունը	Ծրագրի ընդ. բյուջե	որից		Իրականացման տարեթիվը
				Դոնոր կազմակ	Համայնքի ներդրում	
1	Ներհամայնքային ճանապարհներ	Գյուղական տարածք.տնտես.զարգացման ծրագիր/ԻՖԱԴԻ/	130.24 մլ.դրամ	118.4 մլ.դր.	11.84 մլ.դր.	2007թ.
2	Տեխնիկայի ձեռքբերում	Գյուղատնտ. բարեփ.աջակ.ծրագիր/ԳԲ	54000ԱՄ Ն դոլար	54000ԱՄՆ դոլար	-	2008թ.

**ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԿԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ, ՆՊԱՏԱԿՆԵՐԻ
ԱՌԱՋԱԴՐՈՒՄ ԵՎ ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ**

Ըստ առանձին բնակավայրերի ծրագրերի ընտրության և նրանց առաջնահերթության որոշման համար հիմք է հանդիսացել համայնքի ղեկավարի նախընտրական խրագիրը և համայնքի ղեկավարի նախընտրական քարոզարշավի ժամանակ համայնքի ընտրողների կողմից տրված պատվիրանները : Ծրագրերի իրականացման, արժեքների գնահատման և հնարավոր ֆինանսավորման աղբյուրների բացահայտման համար հիմք են հանդիսացել տեղական բյուջեի ֆինանսական միջոցների վերլուծությունը, շ.ձ. Կառավարության տարածքային զարգացման ռազմավարությունը և հանրապետությունում գործող ներդրումային կազմակերպությունների ու հիմհաղթամների հետ հաստատած համագործակցության կապերը :

2017-2021թթ. Նախատեսվում է իրականացնել հետևյալ ծրագրերը.

ԾՐԱԳԻՐ ԹԻՎ 1

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝

Հ.Հ. Շիրակի մարզի Լուսաղբյուր համայնքի խմելու ջրի ներտնտեսային ցանցի կառուցում և ջրամբարի վերանորոգում:

ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Համայնքի բնակչության խմելու ջուրը մատակարարվում է լոկալ համակարգով՝ բնակավայրում առկա 8.1 լիտր/վրկ. Հզորության բնական աղբյուրի միջոցով: Մինչև 1990թ. բնակավայրին խմելու ջուր է մատակարարվել նաև «Արևիկ-Մարալիկ»/ներկայումս «Կրասար-Մարալիկ»/ջրամատակարարման կենտրոնացված համակարգից, սակայն ջրի քանակության նվազման պատճառով շուրջ 23 տարի է ինչ ջրամատակարարումը դադարեցվել է: Բնակավայրի ջրամատակարարման ներտնտեսային ցանցի ընդհանուր երկարությունը կազմում է 7 կմ և համայնքը ունի 300 խ. մ. Տարողության օրվա կարգավորման ջրամբար, սակայն վերը նշված համակարգից ջրամատակարարումը դադարելուց ի վեր ցանցը չի շահագործվել: Ներտնտեսային ցանցի բացակայության պատճառով բնակչությունը խմելու ջուրը տեղափոխում է համայնքի միակ աղբյուրից՝ ձեռքով և սայլակներով:

Համայնքի ներկայիս չշահագործվող ներտնտեսային ցանցը կառուցվել է 1985թ. և ունի ընդամենը 2.5 կմ. Երկարություն : Ցանցի տեղամասերի քայքայվածության պատճառով հաճախակի են ջրագծի վթարները, կորուստերը և ջրի աղտոտումները :

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի նպատակն է բարելավել համայնքի բնակչության խմելու ջրի մատակարարումը, կանխել ջրի կորուստները և հնարավոր աղտոտումները:

ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

. Ուսումնասիրել խմելու ջրի ներհամայնքային ցանցի տեխնիկական վիճակը, ճշտել նորոգման ծավալները, կազմել թերությունների ակտ նախագծային- նախահաշվային փաստաթղթերը.

. Ծրագրի օժանդակ աշխատանքներն իրականացնել «վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրի շրջանակներում :

. «վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրի շրջանակներում կազմել ծրագիր-առաջարկի փաթեթ և մինչև 2017թ. Հ.Հ. Շիրակի մարզպետարան:

.Ծրագրի իրականացման համար պահանջվող շինարարական նյութերը, տրանսպորտային և տեխնիկական միջոցները ապահովել տեղական բյուջեի և համայնքի անդամների ներդրումների հաշվին:

ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Կբարելավվի համայնքի բնակչության խմելու ջրի մատակարարումը, կկանխվեն ջրի կորուստները և հնարավոր աղտոտումները :

ԾՐԱԳՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

.Ծրագրով նախատեսվախ օժանդակ աշխատանքների իրականացման համար <<վարձատրվող հասարակական աշխատանքներ >>ծրագրի շրջանակներումներգրավել 1.5մլ. դրամի ներդրում.

. Ծրագրով իրականացման համար պահանջվող շինարարական նյութերի, ըրանսպորտային և տեխնիկական միջոցների ապահովման համար տեղական բյուջեից կատարել 600.0 դրամի ներդրում :

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Խմելու ջրիներտնտեսային ցանցի նորոգման աշխատանքները նախատեսել՝ 2017 թվականին:

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒ՝

Լուսաղբյուր համայնքի ղեկավար՝

Մելս Մանուկյան:

ԾՐԱԳՐԻ ԹԻՎ 2

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄ Է

Հ.Հ. Շիրակի մարզի Լոռսաղբյուր համայնքի ներհամայնքային ճանապարհների փոսային նորոգում:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Ներհամայնքային ճանապարհների փոսային նորոգման աշխատանքները նախատեսել՝ 2018թ-ի :

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒ՝

Լուսաղբյուր համայնքի ղեկավար՝

Մելս Մանուկյան:

Ծրագրի աջակիցների՝ համայնքի ավագանու անդամներ :

ԾՐԱԳԻՐ ԹԻՎ 3

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Հ.Հ. Շիրակի մարզի Լուսաղբյուր համայնքի գյուղապետարանի շենքի վերանորոգում :

ՀԻՄՆԱԽՆԴԻՆԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Գյուղապետարանի շենքը կառուցվել է 1970-ական թվականներին և հիմնական նորոգման չի ենթարկվել :Գյուղապետարանի շենքում անհրաժեշտ պայմաններ չկան համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության կազմակերպման համար:Մշակույթի տան բացակայության պայմաններում,գյուղապետարանի շենքը համայնքում ծառայում է որպես համայնքային կենտրոն :Գյուղապետարանի շենքի փոքր դահլիճում են անցկացվում համայնքային նշանակության հարցերի քննարկումները,միջոցառումներն ու համայնքի ավագանու ընդլայնված նիստերը :

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Գյուղապետարանի շենքի նորոգման հարմարավետ պայմաններ ապահովել համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության և համայնքային նշանակության միջոցառումների ու քննարկումների համար :

ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

. Ուսումնասիրել գյուղապետարանի շենքի տեխնիկական վիճակը,կազմել թերությունների ակտ և նախագծանախահաշվային փաստաթղթերը.

.Գյուղապետարանի շենքի նորոգման հարցը ներկայացնել համայնքի ավագանու համաձայնեցմանը.

.Ծրագիրը իրականացնել համայնքային սեփականության 10հա. վարելահողերի օտարումից գոյացող ֆոնդային բյուջեի միջոցներովմորի համար նախապատրաստել և կազմակերպել համայնքային սեփականության 10հա. վարելահողերի օտարման աճուրդ վաճառքը :

.Մրցույթային կարգով ընտրել շինարարական կազմակերպության և կազմակերպել գյուղապետարանի շենքի նորոգման աշխատանքները :

ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Գյուղապետարանի շենքի նորոգմամբ հարմարավետ պայմաններ կապահովի համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների գործնեության և համայնքային նշանակության միջոցառումների ու քննարկումների համար :

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Ծիրագիրը նախատեսվում է իրականացնել 2018թ. ընթացքում.

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒ՝

Լուսաղբյուր համայնքի ղեկավար՝ **Մելս Մանուկյան:**

ԾՐԱԳՐԻ ԹԻՎ 4

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Հ.Հ. Շիրակի մարզի Լուսաղբյուր համայնքի մանկապարտեզի շենքի վերանորոգում :

ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Համայնքի մանկապարտեզը կառուցվել է 1989թ. և մինչև օրս հիմնական նորոգման չի ենթարկվել :Մանկապարտեզը գործել է մինչև 1993 թվականը և միջոցների բացակայության պատճառով դադարեցվել է գործունեությունը:

Համայնքի նախադպրոցական տարիքի երեխաների խնամքի,ղաստիրակության և կրթության հարցում համայնքը մեծ կարևորություն է տալիս մանկապարտեզի գործարկմանը :Մանկապարտեզի գործարկման կթեթևանա հատկապես մայրերի տնտեսական ծանրաբեռնվածությունը,երեխաները կկտրվեն բակերից և փողոցներից:

Տեղական բյուջեի սահմանափակ միջոցներով հնարավոր չէ իրականացնել մշակույթի տան հիմնանորոգման և գույքի բարելավման մեծածավալ աշխատանքներ :Այս շրագրի իրականացման համար անհրաժեշտ է պետական մարմինների կամ միջազգային ներդրումային կազմակերպությունների ու հիմնադրումների աջակցությունը:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Նորոգել մանկապարտեզի շենքը,այն համալրվել անհրաժեշտ գույքով և հարմարավետ պայմաններ ստեղծել համայնքի թվով 63 նախադպրոցական տարիքի երեխաների խնամքի,դաստիարակության և կրթության համար:Մանկապարտեզի գործարկմամբ կթեթևանա հատկապես մայրերի տնտեսական ծանրաբեռնվածությունը :Ժամանակը կօգտագործվի գյուղացիական տնտեսությունների խնդիրների և հանգսի համար :

ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

. Մշակել և Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամների /ՀՄՆՀ/ ներկայացնել մանկապարտեզի նորոգման և գույքի համալրման ծրագիրը:

.Հարցի առնչությամբ դիմել Հ.Հ. Շիրակի մարզպետի աջակցությունը:

.Ապահովել ծրագրի կառավարումը և աշխատանքների կազմակերպումը:

. Ապահովել ՀՄՆՀ ծրագրի շրջանակներում համայնքից պահանջվող 10%-ի ներդրումը:

ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Մանկապարտեզի նորոգման հաշվարկների ծրագրի իրականացման համար կպահանջվի 10.0 մլն.դրամ,որի10 տոկոսը` 1 մլն.պարտավորություն է ստանձնում ապահովելու համայնքը :

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ըստ նախնական հաշվարկների ծրագրի իրականացման համար կպահանջվի 10.0 մլն. դրամ,որի 10 տոկոսը` 1 մլն. պարտավորություն է ստանձնում ապահովելու համայնքը:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2018թ. ընթացում :

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒ՝

Լուսաղբյուր համայնքի ղեկավար` **Մելս Մանուկյան:**

Ծրագրի աջակիցներ` համայնքի ավագանու անդամներ :

ԾՐԱԳԻՐ ԹԻՎ 5

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Հ.Հ. Շիրակի մարզի Լուսաղբյուր համայնքի համայնքային կենտրոնի կառուցում :

ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Գյուղական ակումբի շենքը կառուցվել է 1940-ական թվականներին և երբևէ հիմնական նորոգման կամ վերակառուցման չի ենթարկվել: Ակումբը նախկինում եղել է համայնքի բանկչության հանգստի և ազատ ժամանցի կազմակերպման միակ օջախը : Ակումբի շենքի քայքայվածության և անբարեկարգ վիճակի պատճառով շուրջ 23 տարի է ինչ համայնքում մշակութային և մասսայական միջոցառումներ չեն կազմակերպվել, համայնքում շենքային այլ հարմարություններ նույնպես չկան բնակչության հանգստի և ազատ ժամանցի համար: Գյուղական համայնքի համար անհամեմատ ավելի մեծ ֆինանսական ներդրումներ կպահանջվեն, քան համայնքային նոր կենտրոնի կառուցման համար :

Մշակույթի տունը ապահովված չէ նաև անհրաժեշտ գույքով և սարքավորումներով: Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է պետական մարմինների, տեղական կամ միջազգային ներդրումային կազմակերպությունների ու հիմնադրամների աջակցությունը:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Համայնքային կենտրոնի կառուցմամբ և անհրաժեշտ գույքով ու սարքավորումներով համալրելու շնորհիվ, հարմարավետ պայմաններ ստեղծել համայնքի բնակչության հանգստի ու ազատ ժամանցի կազմակերպման, երիտասարդների մշակութային ու գեղագիտական դաստիարակության համար:

ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

. Դիմել Հ.Հ. Շիրակի մարզպետին՝ Լուսաղբյուր համայնքի համայնքային կենտրոնի կառուցման ծրագիրը <<Մահմանամերձ համայնքների զարգացման >> Հ.Հ. կառավարության ծրագրում ընդգրկելու համար :

.Հարցի առնչությամբ դիմել Հ.Հ. կառավարությանը ընտրատարածքի Ազգային ժողովի պատգամավորին :

ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Համայնքային կենտրոնի կառուցմամբ և այն ժամանակակից գույքով, երաժշտական գործիքներով և սարքավորումներով համալրելու շնորհիվ հարմարավետ պայմաններ ստեղծել համայնքի բնակչության հանգստի ու ազատ ժամանցի կազմակերպման, երիտասարդների մշակույթային ու գեղագիտական դաստիարակության համար :

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ըստ նախնական հաշվարկների ծրագրի իրականացման համար կպահանջվի 50.0 մլն. դրամի ներդրում :

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Ծրագիրը նախատեսել իրականացնել 2019թ. ընթացքում:

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝

Լուսաղբյուր համայնքի ղեկավար՝ Մելս Մանուկյան:

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՍՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

N	Ցուցանիշի անվանումը	Չափի միավոր	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.	2021թ.
1	2	3	4	5	6	7	8
1	Համայնքի տարածքը	հա	2168.2	2168.2	2168.2	2168.2	2168.2
2	Բնակչության թիվը	մարդ	740	740	745	748	755
3	Տն.տնտեսությունների թիվը	ընտ.	179	-	-	-	-
4	Ծնունդը		10	-	-	-	-

5	Մահացությունը	մարդ	5	-	-	-	-
6	Աշխատունակ բնակչություն	մարդ	350	-	-	-	-
7	Զբաղվածները ընդամենը այդ թվում ըստ տնտեսության ճյուղերի	մարդ	300	-	-	-	-
	ա/գյուղատնտեսություն/թերի բեռնվածությամբ	մարդ	250	-	-	-	-
	բ/արդյունաբերություն	մարդ	-	-	-	-	-
	գ/շինարարություն	մարդ	-	-	-	-	-
	դ/ծառայությունների ոլորտ	մարդ	35	-	-	-	-
	ե/այլ ոլորտներ	մարդ					
8	Գործազրկության մակարդակը	%	88%	-	-	-	-
9	Առևտրի և հասարակական սննդի օբյեկտների թիվը	հատ	1	-	-	-	-
10	Համայնքային սեփականության վարելահող	հա	547.4	-	-	-	-
11	Պահուստային հողերի օգտագործման մակարդակը	%	100%	-	-	-	-
12	Խմելու ջրի ներհամայնքային ցանցի երկարությունը	կմ	-	-	-	-	-
13	Ներհամայնքային ոռոգման ցանցի երկարությունը	կմ	-	-	-	-	--
14	Ոռոգման համակարգի	հա	-	-	-	-	-
15	Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը	կմ	7կմ	7կմ	7կմ	7կմ	7կմ
16	Զբարեկարգված փողոցների և ճանապարհների երկարությունը	կմ	3.5կմ	3.5կմ	3.5կմ	3.5կմ	3.5կմ
17	Ընդամենը բնակ-ֆոնդ այդ թվում՝	հատ	148	-	-	-	-
		բն/քմ	15600				

	Համայնքային	հատ ք.մ.	-	-	-	-	-
	Մասնավոր բնակ.ֆոնդ	հատ ք.մ.	148 15600	-	-	-	-
18	Բնակարանի կարիքավոր ընտանիքների թիվը այդ թվում՝	հատ	40				
	Անօթևանի կարգավիճակ ունեցող	հատ	15				
19	Մեկ շնչին ընկնող ջրի սպառումը	լիտր/օր	141				
20	Ջրի կորուստները ցանցում	%	-	-	-	-	-
21	Սովորողների թիվը հանրակրթական դրոցում	մարդ	85				
22	Երեխաների թիվը մանկապարտեզում	մարդ	-	-	-	-	-
23	Գյուղապետարանի ենթակառ.աշխատողների թիվը	մարդ	7				